Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունվարի 25-ի N 113 - Ն որոշման

ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺՈՎ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՏՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆԿԱՆԽԵԼԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱԿՏԻՎԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված ակտիվի սկզբնական արժեքի որոշման և օրենսգրքի 55-րդ հոդվածի 12. 1-ին մասով սահմանված ծախսերի փաստաթղթավորման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը կիրառվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցումից հետո ընկած ժամանակաշրջանների շահութահարկի հաշվարկման նպատակով:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցումից հետո ընկած ժամանակաշրջանների շահութահարկով հարկման բազան որոշելու նպատակով մինչև Հայաստանի Հանրապետությունում գրանցման պահն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված (ստացված), կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվների և առաջացած պարտավորությունների փաստաթղթավորումը իրականացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական

հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հաշվեկշռային ակտով:

4. Սույն կարգի կիրառության նպատակով հաշվեկշռային ակտում ներառված ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են դրանց ձեռքբերումը կամ առաջացումը հիմնավորող՝ օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերի հիման վրա, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հարկ վճարողի նախաձեռնությամբ իրականացվող փորձաքննության արդյունքներով որոշվող շուկայական արժեքի 70 տոկոսի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ